ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2018թ ապրիլի 27 N 42

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՇՏԱՐԱԿԻ Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> , <<ԱԼԱԳՅԱԶԻ Շ. ՄՀՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ԱՓՆԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ԱՐԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ԱՎՇԵՆԻ Մ. ՇԱՄՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ՇԵՆԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ԱՊԱՐԱՆԻ Վ. ՈՍԿԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ՔՈՒՉԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները

Կարգադրում եմ՝

1. 2018 թվականի ներքին աուդիտի բաժնի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Աշտարակի Վ. Պետրոսյանի անվան հիմնական դպրոց>>, <<Ալագյազի Շ. Մհոյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Ափնայի միջնակարգ դպրոց>>, <<Արայի հիմնական դպրոց>>, <<Ավշենի Մ. Շամոյանի անվան հիմնական դպրոց>>, <<Շենավանի միջնակարգ դպրոց>>, <<Ապարանի Վ. Ոսկանյանի անվան հիմնական դպրոց>>, <<Քուչակի Մ. Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում անցկացնել 2015-2017թթ համակարգի գնահատման աուդիտ բաժնի պետ Սարգիս Մուրադյանի, բաժնի գլխավոր մասնագետներ Ենոք Մինասյանի, Արթուր Կարապետյանի, Գոռ Եգորյանի և Սիրան Ասատրյանի կողմից,

աշխատանքներին մասնակից դարձնելով վերոհիշյալ պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին և հաշվապահներին:

2. Աուդիտի անցկացման ժամկետ սահմանել 28 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2018 թվականի մայիսի 2-ից ավարտել հունիսի 11 -ին:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ